ՈՐՈՇՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
ՎԱԲՏ-ԷԱՃԱՊՁԲ-24/22 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

ք. Երևան 06.11.2023թ.

ժամը 10:00

Հանձնաժողովի նախագահ՝
Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի
լաբորատոր հետազոտությունների բաժնի պետ՝ Գ. Շահբազյան

Անդամներ՝
Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի
լաբորատոր հետազոտությունների բաժնի
գլխավոր մասնագետ՝ Գ.Մխիթարյան

Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի
լաբորատոր հետազոտությունների բաժնի
գլխավոր մասնագետ՝ Ա. Հարությունյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության
գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝ Լ. Ադոնց

---

1. Տեղեկություն հայտերի բացման օրվա և ժամի մասին

1.1 «**ՎԱԲՏ-ԷԱՃԱՊՁԲ-24/22**» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված է եղել 2023թ. նոյեմբերի 01-ի ժամը 10:00-ն: Հակադարձ աճուրդը տեղի է ունեցել 2023թ նոյեմբերի 02-ին **eauction.armeps.am** համակարգի միջոցով:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները /անունները/ և հասցեները.

N	Մասնակիցների անվանումները	Հասցե, հեռախոսահամար
1	«Ամազոն Իմպորտ» ՍՊԸ	ք. Երևան, Ռ. Լեմկինի փող. հեռ. 094-28-88-34
2	«ԹՐԵՅԴ ԻՆՎԵՍՏ » ՍՊԸ	ՀՀ,Արարատի մարզ, գ.Մխչյան,Շահումյան փ. տուն 23 հեռ. 077-19-89-89
3	«Պարագիծ » ՍՊԸ	ՀՀ, Արմավիրի մարզ,Փարաքար համայնք,Մերձավանի խճ., թիվ 10 հեռ. 093-47-88-82

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

3. Տեղեկատվություն հայտերի հարցումների և պատասխանների վերաբերյալ

3.1 Հարցումներ չեն ստացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

4. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտը կազմված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ «Ամազոն Իմպորտ» ՍՊԸ-ի, հրավերի հավելված N 1-ը և 1.3-ը /էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարություն և իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր/ հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը նշված չէ, ինչպես նաև տեխնիկական բնութագրում հարկավոր է հստակ նշել մատակարարվող ապրանքի նկարագիրը ճշգրիտ չափանիշներով:

- **Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի «Գնումների գործընթացի կազմակերպման» մասին թիվ 526-Ն որոշման 41-րդ կետը նիստը կասեցվել է և հայտերի բացման օրը /02.11.2023թ./ սույն ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից eauction.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հաղթող մասնակցին է ուղարկվել՝ անհամապատասխանության շտկման վերաբերյալ ծանուցումը: Մասնակիցը սահմանված ժակետում ուղարկել է փաստաթղթի շտկված տարբերակը, որը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար:**

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

5. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկի վերաբերյալ

5.1 Մասնակիցների գնային առաջարկը հետևյալն է.

Հ/Հ	Անվանում	Հայտ ներկայացրած մասնակից	Նախա-հաշվային գին	Նախնական առաջարկ		Վերջնական առաջարկ		Մասնակ ի կարգա վիճակ
				Արժեք /ՀՀ դրամ/	Գին /ՀՀ դրամ/	Արժեք /ՀՀ դրամ/	Գին /ՀՀ դրամ/	
1	հատուկ մասնագիտական սարքեր – նյութեր	«Ամազոն Իմպորտ» ՍՊԸ	**250 000**	5000000	5000000	205000	205000	
		«ԹՐԵՅԴ ԻՆՎԵՍՏ » ՍՊԸ		207777	249332.4	207777	249332.4	
2	հատուկ մասնագիտական սարքեր – նյութեր	«Ամազոն Իմպորտ» ՍՊԸ	**2 000 000**	5000000	5000000	1528000	1528000	
		«ԹՐԵՅԴ ԻՆՎԵՍՏ » ՍՊԸ		2000000	2000000	1545000	1545000	
		«Պարագիծ » ՍՊԸ		1665777	1998932.4	1665777	1998932.4	

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

6. «ՎԱԲՏ-ԷԱՃԱՊՁԲ-24/22» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման մասին

Հանձնաժողովը որոշեց՝

6.1 Ընտրված մասնակից ճանաչել «Ամազոն Իմպորտ» ՍՊԸ-ին՝ 1, 2 չափաբաժինների մասով:

6.2 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

6.3 Պայմանագիր կնքելու նպատակով անգործության ժամկետի ավարտից հետո ընթացակարգի ընտրված մասնակցին առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում գնման գնի 10 (տասը) տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ գնման գնի 15 (տասնհինգ) տոկոսի չափով, որոնց ներկայացնելուց հետո սահմանված կարգով կկնքվի պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

Հանձնաժողովի անդամների ստորագրություն՝

Նախագահ՝ Գ. Շահբազյան

Անդամներ՝ Գ.Մխիթարյան

Ա. Հարությունյան

Քարտուղար՝ Լ. Ադոնց